## ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի դիտողությունները "Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2018 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին" ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

Նախագծի հիմնավորման մեջ ժամանակային առումով տարանջատված չէ Սևանա լճում ձկնային հանրույթի իրավիճակի նկարագիրը: Անհասկանալի է, թե որ ժամանակահատվածին է վերաբերվում ձկնային պաշարների մոնիթորինգի բացակայությունը, քանի որ 2004 թ.-ից առ այսօր յուրաքանչյուր տարի պետական կարիքների համար ՀՀ Բնապահպանության նախարարության հետ կնքած պայմանագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտը իրականացնում է Սևանա լճի ձկնային պաշարների և ջրային կենսաբազմազանության ամենամյա հետազոտություններ:

**Կետ 2.7.** <u>"Սևան" ազգային պարկի պահպանություն, պարկում գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ:</u>

Եթե որպես համակատարող հանդես է գալիս ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան, որն իր կանոնադրության մեջ չունի պահպանության գործառույթ, ապա նպատակահարմար է այս կետում պահպանության և գիտական ուսումնասիրությունների գործառույթները տարանջատել:

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում նաև "Սևան ազգային պարկ" ՊՈԱԿ-ի անվանման գրառման ձևին, որը փաստաթղթի տարբեր մասերում տարբեր ձևով է ներկայացված:

**Կետ 2.9.** Նշված միջոցառումների իրականացման համար նպատակահարմար է հստակ նախատեսել որոշակի ֆինանսական միջոցներ: